

նենք անոր հետևանքները բարոյականի, արգարութեան եւ մասնաւորապէս դաստիարակութեան տեսակէտով պիտի ցուցնենք թէ ի՞նչպիսի պայծառութեամբ մը ան կը լուսաւորէ այդ խաւարչային աշխարհները, թէ ի՞նչպէս մեր ընթացքը ամուր հիմերու, անխուսափելի եւ բեղմնաւոր օրէնքներու վրայ կը հաստատէ, մեր մասաւոր հորիզոնը կ'ընդլայնէ եւ նորոգող հետազոտութիւններու անվերջ հեռանկարներ կը պարզէ մեր աչքին առջեւ:

ՏՐ . ՏՐԻԱՏ ԵՍԱՅԵԱՆ

Յանժօ



# ՆԱՍԱԿՆԵՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

— 0 —

## Ա . ՆԱՄԱԿ

Ապահովութեան մէջ ապրող բարեկամ,

... Ձի անցնելի մի քանի օր, եւ այստեղ էլ, որպէս մեր սիրուն երկրի ամէն անկիւն, կ'ողողուի մեր արիւնով, Մեր դիակները պիտոց կը լինին փողոցներին, մեր շքեղ երկիրը կը սեւանայ ազոսաների բազմութիւնից եւ օդը կը լեցուի նրանց կոկոսցով... Ո՛ր կողմ որ դառնաս, աւերակ ես գտնելու, ո՛ր տուն որ մտնես՝ բանաբարուած ու ձգած աղջիկ, գետնատարած մայրիկ, գլուխները սիւների վրայ ջախջախուած մանուկներ ես տեսնելու եւ... գերեզմաններ, գերեզմաններ...

Ես էլ, բոլոր ազգականներդ, ժանօթներդ մինչեւ յետինը մտնելու ենք սանձանուած եւ քեզ բարեւ ունինք, պանդո՛ւխտ եղբայր, որ գուցէ դեռ շատ ապրես . շուտով դաս մեր գերեզմաններն այցելելու եւ նրանց վրայ կանգնած՝ հայրենիքիդ ողբը եզրես:

Յոյս չունինք ապրելու, ո՛չ: Գաղաքի մէջ անցած դարձածն իսկ ապացուցանում է որ բոլորիս կոտորելու են:

Որքա՛ն սառնութեամբեմ գրում այս բոլորը, եւ դու արդեօք սառնութեամբ չէ՞ որ այս

կրկնուած, երեքնած նկարագրութիւններէց էլի մէկը պիտի կարգաս:

Զօրս օր առաջ սկսեց, ե՛րբ պիտի պայթի՞ չը գիտեմ, գուցէ այսօր, մի ժամից, գուցէ այս բոյեթիս: Մի քանի օր է արդէն որ շքեղ քաղաքներէց հասած կոտորածների լուերը գրգռել են բոլորի ջղերը: Լաւրի՛ ու մի թեթեւ աղմուկ բաւական է ամենքին զարուրեցնելու:

Պիտի տեսնէիր ստակումը, երբ լուր տարածուեց շուկայի մէջ, թէ վաճառական Մըկըրտչին մի թիւրք՝ գաշոյնի հինգ հարուածով՝ փռել է գետին:

Շուկայի մի ծայրից դէպ է միւսը կարծես մի ուրազան սահեց: Աղմուկ, շփոթ, փախչողներ... Որոտումով փակուած էին խանութները տախտակեայ փողկերը. շատերը խելք կորցրածի պէս թողնում էին ամէն ինչ՝ խանութ, գլխարկ, կօշիկ՝ եւ վազուձ գէպ է տուն... պահ մը եւս եւ, շուկան դատարկ էր, ամայի, բաց, իսկ փողոցներում՝ վազող վազողի:

Եւ լուրեր են հասնում հետզհետէ մեծացող, երբեմն այլանդակ, Որպէս թէ սպանել են ո՛չ միայն Մկրտչին, այլև շատ անցորդ Հայերի. որպէս թէ թիւրքերը խումբ առ խումբ, փողոցների ծայրերում կանգնած, զաշուռում են կամ գոչակահար անում բոլորին...

Հաւաքուել ենք եկեղեցու բազը: Ամենա ապահով տեղն է, Անա լցոււմ է մատուոք, խորհրդարանն ու զարոցի սենեակները, Կին, տղայ, ծեր՝ ճշում են, լալիս, ողբում: Ոմն իր ամուսինն է փնտռում, մէկը՝ իր որդին, միւսն՝ իր եղբայրը որոնում: Մի նոր նշանած աղջիկ էլ ընկել է սենեակից սենեակ, բազից բազ ու մի կողմը թողած ամօթխաձութիւնը, խելակորոյս՝ իր սիրելուն է որոնում:

—Մկրտի՛չ, Մկրտի՛չ, ձայնում է նա սրտանմոխի, աղիողորմ:

Միւսու սեղմում է. ի՞նչ Մկրտի՛չ է այդ: Մէկը, որ ստակումից կծկուել էր մի տեղ, կանչում է.

—Ի՞նչ ես ողբում, աղջիկ, Մկրտչին ըստանցիցիս:

—Ապանցիցի՛ս... Անուան գուգադիպութիւն էր թերեւս. բայց մի ստոկակի ճիչ գուրս թուաւ աղջկայ կուրծքից եւ նա փուեց գետին:

Սակայն ո՞վ է ուշք դարձնողը : Միեւնոյնը չէ՞ : Աւելի լաւ էր նախօրօք միտնիլ և քան յետոյ ընկնել զինւորներէ ձեռքը . . .

Մի ուրիշ տեղ կուշ են եկել ահա կին ու մանուկներ , միմեանց են կպել ու լալիս են որպիսի՞ լաց . . . եւ պտառաներ՝ որոնք կուրծք են ծծեալ , աղօթում են . . .

Լուր է պարտում որ ընդհանուր կոտորած է սկսել , Նորինն սկանջիս է հասնում խուլ , բայց յաճախ կրկնուող հրացանաձգութեան ձայներ :

Չը դիտեմ ե՞րբ էր—այլեւս ժամանակը գոյութիւն չունի մեզ համար—եկեղեցի մտաւ մի երիտասարդ : Նրջպատեցինք նրան և նա էր որ պատեց թէ պահակ զինուորները ըսպանել են Մկրտչի ապանդին , յետոյ տարել սարչոյ ու այնտեղ յայտնել , որ սպանուած մահմտականին խիչել են ապտամբ դեաւուրների ձեռքից : Մահմտականները այդ ժամանակ ամէն տեղ սկսում են գոռալ :

—Մա՛հ գեաւուռներին . . .

Իրենք Գ. Ք. Ն. Ն. Ն. են աւելը և նարել գործարելու համար Սուլթանից արուած հրամանը : Չէ՞ որ երբ մի խումբ ամբոխ յարձակում է չուկայի վրայ , փայտն եւ իւրայինք , կամենալով իրենց պահել կողուպտուտ , փակել են ամբոխի դէմ եւ գոչել . . .

—Գնացէ՛ք թաղերը , միւսլիմաններ , ձեզ 38 ժամ հրաման ենք տալիս գեաւուռներին կոտորելու . . .

Բայց խուժանը չէ կամեցել հեռանալ ճոխ թալանից , եւ այդ ժամանակ փայտն հրամայել է զօրքով ցրուել ամբոխին դէպ ի թաղերը , յետոյ մի առ մի բաց է անել տուրբուրը խանութները եւ մինչեւ յետին խիւղ կողոպտել . . .

Մենք , որ գիշերն ամբողջ անկացրինք եկեղեցու մէջ՝ մօտ 3—4000 հոգի , անօթի , անձածակոց , վախից կիսամահ , գրէթէ անզէն—սուսուտեան միայն իմացանք չուկայի կատարեալ թալանման լուրը :

Գրեթէ ոչ ոք չաղաղակեց , Մեռելային գուռ նաթափութիւն պատեց բոլորին , Կթոռեցին տոբեր եւ շատերն սկսեցին ծնկները ծծեւլով լալ :

Լսվում էին հառաչներ միայն , Տեսնուած էին կոյտ-կոյտ , փոթորիկից ջարջուած հօտի պէս միմեանց վրայ ինկած , գետնի վրայ փռուած ,

անկիւններում կծկուած , աննպատակ թափառող , անմիտ հայեացքով նայող ծերեր , մանուկներ , կանայք . . .

Բ. ՆԱՄԱԿ

Կէս օրն անցել է : Շատերը մեղմից , յաջողութեան տուն գնալ , պաշար ու ծածկոց բերել :

Գաղաքում տիրում է մի մեռելային ծանր , ճնշող լուսթիւն : Անցուղարձ գրեթէ չկայ : Շատեր գեռ մնում են իրենց տների մահառաններում թագնուած , մութ խորշերում պահուած :

Մի քանիսը յոյս են տածում որ վտանգն անցել է , որ փոթորիկը վերջացել է : Բայց խորին լուսթիւնը աւելի է սարսափ ազդում : Այդ լուսթիւնը փչող փոթորիկի նախընթացն է : Այդպէս է լինում մի բոպէ , երբ հետեւում է կործանիչ հեղեղը , աւերիչ ուրագանը : Այդպէս է լինում այն բոպէն , որից յետոյ ամպերը որոտընդոտ գոռում են եւ կարծակի հրային գծերով պատառում օդը , ոսկեգոյն սուրճները ցրում եթերին մէջ . . . Այդպէս է լինում այն բոպէն , որից յետոյ ճրաղը բոցափայլում է ու հանգում , մեռնողն աղաղակում է եւ յաւիտեան ննջում . . .

Եւ արդարեւ , յանկարծ մի խուլ շղթոց կոհակածեմ ցնցեց օդն ու խուժեց դէպ ի մեզ : Մի աղմուկ , որ զուրս գալով հազարաւոր ոռնացողների կոկորդից , անցնում էր փողոցներ , զուգացնում ամէն ինչ , շարժում ծառերը , ցնցում գետիւրը . . . մի յարատեւ դաշլային ոռնոց միշտ մեծացող , հետզհետէ մօտեցող , Լսվում էին նաեւ թմուռկների ձայներ , կարծես քաղաքից գուրս քանակած գնչուները իրենց թմուռկներով պար էին սարքել քաղաքի հրապարակում : Եւ դրան հետեւում էին փչող , ջարգուող զոների ձայներ , կացիներէ թշուրիւն , տների մէջ մորթնողների սուր , աղետարչ ու կծու թեմամբ օդը քեղդող ճիչեր , թալանողների յաղթական խոպտո կանչեր . . .

Գալի՛ս էին :

Մի բոպէ ոչ ոք մեզնից չկարողացաւ մի բառ արտասանել : Գաղաքից ամէն հասալ , ամէն ողբ և Ոտքի թոռն բոլորը զսպանակաւոր

գործերը պէս ոտանելով, լարեցցին ջղեր, ակնապիլ՝ քարացան հայտաքններ...

Ենտոյ, ա՛հ յետո՛յ... մի խառնաշփոթ, մի ժխո՛ր...  
—Տղե՛ բք, գալի՛ս են լուսեց յանկարծ մի երիտասարդի ուժգին ձայն—մի՞թէ՛ թողնելու ենք որ ոչխարի պէս մեզ մորթին:

—Մտնեն՛ք քաշերի պէս... ձայնեց մի ուրիշը:

—Ձե՛նք, զե՛նք...  
—Դուրս յարձակենք...

էլ ոչինչ չէր որոշուում: Առաջին ձայն տուողը ըստ դուրս եկաւ. բոպէսպէս բոլորս կիտեցինք նորա շուրջը, մեր զէնքերը զննեցինք, յետոյ խմբի ըստնուեցինք եւ դուրս թռանք բազից:

Ամէն կողմից հասնում էին նոր փախտականներ եւ ըստբաղդարաբ՝ զինուած:

—Մի՛նչ վերջին շունչ, տղե՛ բք... գոչեց զլիաւորը:

—Անձնատուր չլինի՛նք, սասց մի ուրիշը միեւնոյն է, մեզ ողջ չեն թողնիլ ո՛չ մի հանցամասնքում:

Ահա եւ խուժանի, յարձակող գայլերի ծայրը: Ի՛նչ խուժան:

Առջեւից ու մէջտեղից երեւում էին զինուորներ, բայց անկանոն կանգնած: Քիրտ եւ թիւրք լամբոնը զինուած էր ամէն տեսակ զէնքով: Ազադակում էին որքան ձայն ունէին, եւ կանայք, թմբուկներ ձեռքերին՝ պար էին բռնել, ստատում: Աւ զրգուում էին իրենց վայրենի ամուսիններին...

Չարհուրելի էր, երբե՛ք սպալտի կատաղի, գազանային ամբոխ շես կարող երեւակայիլ:

Գայլում էին միշտ ոռնալով՝ հանդիպածին տապալում էին, մորթում: Եթէ տուն էր—դուռը ջարդում կացինի հարուածներով, ներս էին խուժում, մի յուպէի մէջ տունը ամբակեցնում, քանդում, աւերակ դարձնում ու անցնում... կարծես մորեխներ լինէին, որ մի իջնելով՝ ամբողջ արտեր են սնչացնում:

Սակայն մեր գնդակները կանգնեցրին նրանց, ի ոլորս միտան կրակ անդաջինք նրանց վրայ: Ձինուորները փորձեցին խմբուելի, պատասխանել մեզ, բայց խառնեցին, կատաղել խուժանի յաղթական ոռնոցը փոխեց ճիւղերի, թմբուկները ընկան, կանայք ետ փախան, հրեցին և հրմակեցին...

ու մի խառնաճաղանձ, զգուելի խառնուրդով ցրուեցին:

Այո՛, բարեկամ, ցրեցինք 10,000 ից աւելի իս խուժանի, որ մեր արիւնն էր ուս դում, մեր ինչքը, մեր պատերաւ: Յրեցինք մեր չնչին զէնքերով և Ա՛խ, եթէ աւելին ունենայինք...

Գա՛ջ ընկերներս... պէտք էր տեսնել թէ ինչպէ՛ս սերտ առած՝ մտան տների մէջ, լուսամուտներից կրակ ու ամէն ինչ սկսեցին տեղալ գայլերի վրայ, ջարդել ու փշրել, հալածել ու ցրուել... Նս էլ էի կրակում, անդադար հրացանում, եւ ո՛չ մի գնդակ պարզալ չէր վրայում, ո՛չ մի:

Իայց ի՛նչ կարող ենք անել մեր այս խղճալի զէնքերով, զնդակների ու վատրի չնչին պաշարով, եթէ ոչ՝ միայն աւելացնել արիւնարուճներ կատաղութիւնը:

Եւ չի՛ անցնիլ մի օր, գուցէ մի քանի ժամ ու կը գան նրանք զինուած պետութեան տւած զէնքերով, կը գայ զինուորական ուժ թնդանօթներով, ու մեզ կը սպանենն, մեզնից մինչեւ յետինը կը մորթին...  
Չը գիտեմ ալլեւս թէ քանի ժամ կեանք ունիմ...

Գ. ՆԱՄԱԿ.

Դեռ սպրում եմ:

Ապրե՛լ ես դու այսպէս, բարեկամ, կանգնած՝ ծխախոյ, արիւնաշաղխաւ աւերակների կոյտի, հատաչող, վէրքերի մէջ տատապող, արեւնի մէջ տապալկող ազգականներից ծընողներից, բարեկամներից զեակների, փրող տների, սարսափից սպաշած, վախից՝ սարսուցընող քրքիլ արձակող կանանց, իրենց կորցրած՝ երկնայի պէս լացող, հեկեկող սղա՝ մարգերի մէջտեղ...  
Ապրե՛լ ես դու երբեք այսպէս, կանգնած մի քանի խումբ գունամթափ, բայց անյող-զողդ երիտասարդի հետ, ոգի ի բոխի, գիտակից ու պատրաստ մտնելու, գոհելու՝ իր կեանքում:

Եւ սուլում են ահա զլիխո շորս դիէն թըլնամբների արձակած զնգակները, ականջս խլացնում են շրջապատիս շփոթն ու լացը: Թշնամու ոռնոցն ու՛ է այնպանքը:

Առաջին ժամին կորցրել էի ինձ : Հրացանս պարպուում էր անազուտ կամ՝ առանց նպատակի, նայում էի՝ առանց տեսնելու, լսում էի՝ առանց ականջ դնելու : Ոչինչ չէի հասկանում, տեսնում էի որ շրջապատումս ընկնում էին ծանօթներս ու բարեկամներս եւ գալարում : Դիմացից նոյնպէս : Վայրկեան մը դադարեցան հրացանների ձայները եւ տիրող կրճատեւ լռութեան մէջ ականջիս հասան վերաւորայնների հտուչներ... ապա հետեւոր անթիւ ամբոխի ունոցներ եւ գետի տխուր : միտտեսակ խոցը...

Առաջին ժամից յետոյ մի տեսակ սթափման մէջ գտայ ինձ . եւ տեսայ եւ ականջ գրի :

—Տղի՛ բք, քա՛յ եղէք... հակակումս եմ մեր գլխաւորի որոտացող ձայնը, — կրակեցէ՛ք : ողջ-ողջ անձնատուր չը լինիք :

Եւ պայթում են հրացաններ, կրակ ժայթքում . տաք ծուխը ծածկում է մի բոպէ ամէն ինչ, յետոյ ցրւում եւ հետզհետէ նորից երեւցնում ժտեցող զինուորների սւիններէ շարքը...

Զինուորներ են, շարքով կանգնած, լըցնում են հրացանները, միասին բարձրացնում... Թնչում է ապա մի անող ձայն եւ մեր զոների ու լուսամուտների վրայ ցնցումներ են տեղի ունենում, փշրուածքներ, անազին ճեղղուածներ . . . լւում են ճիչեր, աղաղակ . . .

Ու որքան տեսեց այդ—չը գիտեմ...

Յանկարծ եկող զինուորների շարքը կանգ է առնում . նրա ետեւից լսվում են էլի ունոցներ, երեւան է դալիս ամբոխը, կատաղի, զուրս եկած թայանած աներից, քարը է տալիս իր հետ ուտելիք, հագնելիք, գորգ, վերսակ ու... աղջիկներ, ծեղեր, մայրեր...

Ա՛հ, մշուշի պէս աչքիս ապհեւ են գալիս ուշաթափ, մազերը ցրուած՝ մտազհաս աղջիկ ու կանայք, վայրագ Գիւրտուու բազուկներու մէջ սեղմուած, ծերունիների ալեգար գլուխներ, որոնք խեղդուած զազանաբարոյ Թիւրքերի թեւերով՝ քարը են տալիս իրենց մարմինը փողոցի փոշու մէջ եւ մանուկներ, որոնք ճշուած են, իրենց թաթիկները պարզում...

—Մայրի՛ կ, մայրի՛ կ...

Էլ ոչինչ չեմ տեսնում : Հրացանաձգութեւնը զապարել է . ընդհանուր քաբացում է տիրել, իսկ թշնամին յառաջանում է դէպ ի մեզ : Մեր

ծնողները, մեր կանայքն ու մանուկները նրանց առաջից, մեր ինքնապաշտպանութեան գրտալայններին դիմացը գալիս են :

Ա՛հ, վտտի՛րը... ստիպում են մեզ մեր ձեռքով պահանել մեր քոյրերին, մեր մայրերին ու զաւակներին :

Ձէնքերը ցած են իջնում, բազուկներս թուլանում : Բայց հաւ գլխաւորը, որ յանկարծ ցցում է իր երկար, խրոխտ հասակը եւ գունակափ՝ ձայնում է .

—Տղի՛ բք, այդ ի՞նչ է, վարան՞ում էք . չէ՞ որ եթէ կենդանի մնան դրանք, միեւնոյն է, զո՛հ են գնալու այդ գազաններէ կրճերին եւ սրերին... Յառա՛յ, կրակեցէ՛ք, թող մեռնին զոնէ պատուաւոր մահով...

Ու բարձրացրեց հրացանը, նշան առաւ, կրակեց... մի ծեր կին էր որ գնդակն առաւ, բարձրացրեց ձեռքերը, նայեց իր զարնողին եւ մեռաւ...

Մայրն էր...

Գազանները սարսափաւոր՝ կանգ առին, բնազդաբար իմացան որ որդին մօրը հարուածեց : Այդ զարհուրելի, հսկայական սպանութեան առաջ՝ ապշեցին նրանք . վախեցան, սկսեցին ետ քաշուիլ...

Բայց երկար չը տեսեց : Անշուշտ չառ չէին կարող լինել այդպիսի անսիրտներ— մտածում էին նրանք :

Եւ սխալում էին : Բոլորս բարձրացրինք հրացանները : Մերունի կինը, ընկած փոշու մէջ՝ մեր զրոշակն էր գարձել...

—Կրա՛կ... որոտաց գլխաւորը խոպոտ ձայնով —մայրս էր որ սպաննեցի... կրա՛կ, թող մեռնի՛ն բոլորն էլ...

Ու գունաթափ էր որպէս մահ :

Անա այդ բոպէին էր որ աչքս յանկարծ ինկաւ մի Գիւրտի բազուկների վրայ քարը եկող կնոջ դէմքին :

Կի՛նս էր :

Բարձրացրել էի հրացանս . ետ չը քաշեցի . աչքերս միայն փակեցի եւ... կրակեցի...

Եւ երբ բայց, կինս ինկած էր եւ Գիւրտը թաւալում էր նրակողքին : Շատ հեռուն չէին . ինքնամոռացութեան մի բոպէի մէջ զուրս նետուեցի, երկու օտարնով հասայ, խլեցի կենոյս . բարձրացրի եւ ետ եկայ :

Ոչ ոք չը զպաւ ինձ :

Մեռել էր . գնտակս ծակել էր գլուխը, եւ աչքերը ստիպումով ինձ էին նայում : Յած գրի պատու մօրս կողքին .

—Հարգ է, մայրի՛կ... Ե՛ս սպանեցի...  
Ու միացայ խմբին :

Հրացանում Ե՛նք . Շուտով սրերի կը դի-  
մենք . . .

Ո՞վ մեզնից արե՞ծք կենդանի պիտի մնայ . . .

Մնա՛ս բարեւ , ըարեկամ . . .

Թիֆլիս 4 . ՓԱՓԱՋԵԱՆ



### ՏԳԵՏ ԱՉԳԻ ՀԱՆՃԱՐԻՆ



Հանճար էիր , աստուածները զեզ ծընան .  
Նուռնկ եթերում կաթի տեղ լոյս ծըծեցիր .  
Օրոցքիդ շուրջ անփուշ վարդեր ծաղկեցան .  
Անմահների վեհ օրօրով ներհեցիր :

Դու լոյսի մէջ , լոյս շընչեցիր , լոյս տեսար .  
Նրազները ծառայեցին զեզ հըլու .  
Դու խըմեցիր աստուածների հետ նեկտար .  
Ու շընորհքը դու ըստացար երգելու :

Սեւ հող հազար . . . Այգ միջոցով եւ մի օր  
Ոտք կոխեցիր այս կեղծիքի պիղծ հովիտ .  
Նըւերուեցար արեւ հողում զո ըլլօր  
Ցաւերով լի , տըզէտ , խաւար , խեղճ ազգիդ :

Երգել միայն դու գիտէիր . . . երգեցիր ,  
Բայց ոչ ազգիդ ծանօթ հինցած նըւազով .  
Դու խոր երգեր , դու նոր երգեր երգեցիր ,  
Քո զընարը հընչեց հազար լարերով :

Դու երգեցիր անդուռածը այս կեանքի .  
Վերջալուսի հոգեւարքը վեհախառ ,  
Դու երգեցիր ծաղիկները եղծմի ,  
Մեռելների գիշերները մահավառ :

Այն լուսեղէն պալատները երգեցիր ,  
Ուր հանգչեցաւ օրօրոցը զո նախկին .  
Այն լոյս կեանքի ախարհները երգեցիր ,  
Ուր ցայտում են վըտակները պատրանքին :

Ոտք ըռեցիր սեւ մըրրիկի սոյլերում .  
Հին անտառը իր վըշտերից զեզ պատմեց .  
Կոյս ծովակը , լուսնի շողում , փոթորկում ,  
Մերուկ ժայռի զաշտանքները զեզ մասնեց :

Դու երգ տըւեր ծաղկին , ցօղին եւ վարդին ,  
Ու նոցա հետ խօսակցեցիր երգերով .  
Դու ըստ տըւեր մահին , լացին , հառաչին ,  
Նոցա հրդը թարգմանեցիր մեր լեզուով :

Դու մեկնեցիր հայեացքների մունջ լեզուն .  
Սըրտերի մէջ տեսար անբաւ ախարհներ ,  
Դու պատմեցիր հողիներից երազուն .  
Դու ա՛յն տեսար , ինչ որ ոչ ոք տեսաւ  
դեռ . . .

Դորա համար զեզ շատ քիչեր հասկացան ,  
Մով ազգիդ մէջ մի ըուս միայն կաթիլներ .  
Դորա համար զո երգերը չունեցան  
Այն «արժէքը» , ինչ հասարակ երգիչներ :

Սեւ լաց եղար անմարդ ու խուլ տեղերում .  
Անթեցեցիր այն օրը երբ հող հազար . . .  
Մինչ վերջապէս յիմարատան անկիւնում  
Չարչարանքով հազած հողը մերկացար :  
17 Յուլիս 99 .  
Բերլին

### ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ԱՂՕԹԸ

Դըթա՛ , ո՞վ Տէր , մենք անհայր ենք ու ան-  
մայր ,  
Մեր հայրերը կոչկոծամահ մեռուցին .  
Մեր մայրերը ցաւից դարձան խելազար .  
Մոխիրներում մեզ մեն-մենակ թողուցին :  
Անգութ թուրքից մի փըշուր հաց խընդրե-  
ցինք .  
Մեր հօր սիրտը առաջարկեց մեզ ուտել ,  
Ցուրա գիշերում քընելու տեղ խընդրեցինք .  
Դերեզմանում առաջարկեց մեզ ներհել :